«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

25 հունիսի, 2026թ. N 40 - Ա

ՈՐՈՇՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ «ՓԻ–ԷՅՋ–ՓԻ ՓԱՐԹՆԸՐԶ» ՓԲԸ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» օրենքի հոդված 28-ը, «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) Կանոնադրության 14.17.25 կետը, ինչպես նաև Պալատի Խորհրդի 2026 թվականի մարտի 26-ի թիվ 20-Ա որոշումը և Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության հանրային վերահսկողության խորհրդի 2026 թվականի հունիսի 3-ի ««Փի-Էյջ-Փի Փարթնըրզ» ՓԲԸ-ի բողոքը բավարարելու մասին» թիվ 11-Ա որոշումը՝ Պալատի խորհուրդը որոշում է՝

1. «Փի–Էյջ–Փի Փարթնըրզ» ՓԲԸ (ՀԳԳՀ 1 20 0202) 2025թ. հոկտեմբերի 3-ի որակի հսկողության պահանջների պահպանման արտաքին գնահատման արդյունքում տալ 2 «երկու» գնահատական և որպես կարգապահական պատասխանատվության միջոց՝ սահմանել նախազգուշացում:

2. Հանձնարարել «Փի–Էյջ–Փի Փարթնըրզ» ՓԲԸ որակի հսկողության պահանջների պահպանման արտաքին գնահատման հաշվետվությամբ արձանագրված խախտումների և թերությունների շտկման գործողությունների և այդ

գործողությունների ժամկետների վերաբերյալ տեղեկատվությունը սահմանված ժամկետում տրամադրել Պալատի գործադիր տնօրինությանը:

3. Հանձնարարել Պալատի գործադիր տնօրինությանը արտաքին գնահատման գլխավոր վերահսկողի մասնակցությամբ իրականացնել արձանագրված խախտումների և թերությունների շտկման մշտադիտարկում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման օրվան հաջորդող տասներորդ աշխատանքային օրվանից:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **ԹԱԹՈՒԼ ՄՈՎՍԻՍՅԱՆ**